ԼԻԼԻԹ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
LILIT ARZUMANYAN

Վ. ԴԱՎԹՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԷՍՍԵՆ

Վահագն Դավթյանը հայ պոեզիայի մնայուն անուններից է, հայրենիքի ճակատագրով մտահոգ, տառապող հոգի, հայոց պատմության ցավը կրող անհատ, որ գրականություն բերեց իր ծեռագիրը, իր խոհն ու ապրումը:

Կարծում եմ՝ բնավ զարմանալի չէ, որ Վահագն Դավթյանի «Անխորագիր» հուշագրություն-էսսեն նույնքան տաղանդակիր է, որքան նրա պոեզիան: Միայն գուցե ավելի մեղմ, ավելի ներող, ավելի մտերմիկ: Պատումը շատ պարզ է, ամբողջ գիրքն ասես սրտամոտ զրույց լինի, իմաստունի փափուկ զրույց հարազատի հետ, կամ ծեռագիր խոհ, Մեծի անկեղծ պատգամ:

Ինչո՞ւ անխորագիր. «-Այստեղ իմ կյանքն է, ներիր, չափազանցրի կյանքիս մի փոքրիկ մասը, իսկ կյանքը, համոզված եմ, խորագիր չունի...»:

Այո, կյանքի մի փոքր կտորն է սա, որտեղ, սակայն, լիքը-լիքը խոհեր կան, դրանցից ծնված անվերջ հուշեր, հուշերից ծնված մտորումներ, ներսում ընդարմացած ցավ, ու այդ ցավից ծնված փիլիսոփայություն:

«...Արքայից արքա / խոսքը Արտավազդի մասին է - Լ.Ա./, թշվառդ, քեզ ո՞վ էր ստիպում, որ պետական գործերդ թողած, նստես ու դրամաներ գրես քեզ համար... Բանաստեղծդ մեծափառ... ի՞նչ է, չգիտեի՞ր, որ բանաստեղծներն ու արքաները հավերժական ոսոխներ են, դու ինչպե՞ս էիր ուզում այդ երկուսը համատեղել թշվառ անձիդ մեջ: Տեղն է քեզ, արքայից արքա, տեղն է: Եկավ այն գող Անտոնիոսը, խաբեց մեծափառ բանաստեղծիդ, ոսկե շղթաներ դրեց ոտքերիդ ու ծեռքերիդ և քեզ նվեր տարավ իր հոմանուհի Կլեոպատրային: Տեղն է քեզ:

...Վայ գող Անտոնիոս, վայ շուն-շանորդի, վայ սրիկա...»:

Անգամ այս արձակ հուշագրության մեջ Վ. Դավթյանը հավատարիմ է իր ցավին, մեր պատմության արյունոտ էջերից մնացած ցավին: Եվ ինչպես իր պոեզիայում, այստեղ ևս, ամբողջ պատումի հիմքում հայրենիքն է, նրա ծանոթ

ու տխուր պատմությունը. հայի հավերժորեն դժվար ճակատագիրը: Գիրքը բանաստեղծի առ հայրենիքն ունեցած սիրո նորովի արտահայտություն է. որ յուրատեսակ կտակ է հիշեցնում:

«Գիհին պողպատի պես զրնգուն բուն և արյան երակների պես կարմիր արմատներ ունեցող գիհին... Նայում. անվերջ նայում էի այդ ծառին. և նա իմաստավորվում էր մտքիս մեջ. դառնում իմ ժողովրդի դժվար կյանքի ու կարծրության սաղարթավոր բանաստեղծությունը»: Եվ շարունակությունը. որ կողքից պատահաբար անցնող 10-11 տարեկան մի տղա գիտի ինչ ծառ է դա. և անմիջապես տալիս է զուգահեռը Ամերիկայի հարավային քաղաքներից մեկում ոչ ոք չի կարողացել ասել խոշոր. կապույտ ծաղիկներով «մի զարմանալի ծառի» անունը: Ինչո՞ւ, հարցնում է բանաստեղծն ու անմիջապես էլ բացատրում. որովհետև բնիկները չկային այլևս, «և այդ ծառը մնացել էր որբ ու անապաստան»:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե հանկարծ կյանքի ճանապարհը մի այլ երկիր տաներ բանաստեղծին: Ուրեմն չէր լինի այլևս «Վայոց ձորի լերկ ժայռին աճած ծառի իմաստավոր կարծրությունը», չէր լինի երակների մեջ արթնացող այն «սրբազան դողը» Գեղամա վիմավոր վանքը մտնելիս, չէր լինի նաև ծանոթ ձորակի լքված ջրաղացը, որի «քարերին մնացած ալրափոշին նախնիների խղճի բուրմունքն ունի»:

Սրանք իմ հարստություններն են, իմ պատրանքները, իմ երազները: Սրանք իմ տառապանքներն են, իմ ցավերը, իմ վերքերը»:

Հենց սա էլ հեղինակի համար կյանքի իմաստն է. ապրելու ձևը. երբ տանջող դառնահամը անվերջ արթուն հիշողությունն է. մանկությունից բերած «կապույտը» բանաստեղծ անհատի կենսակերպն ու էությունը, կարոտը կյանքի ճշմարիտ գոյությունը:

Եվ որն է հատկանշականը՝ իմաստնացած այրի առանձնակի բարությունը, որ գրքում ներքին երեսն է. ասես երկրորդ շնչառությունը. և պատահական չէ, որ նա իր հուշերի շերտերում տխուր էջերը թերթելիս չար ու անխիղճ մարդկանց մահը չի ցանկանում. թեթև հույս փայփայելով, որ ո՞վ գիտե, «գուցե ծերությունը օգնի մաքրելու խիղճը»:

Իսկ ինչպիսի կերպարներ կան այս գրքում. հեղինակի հուշերի պատկերապատառիկներն են նրանք, բայց իրական ու կենդանի մարդիկ, իրենց ուրույն լեզվով, խիստ որոշակի միջավայրի, ավանդույթների ու սովորույթների մեջ թաթախված:

Գրքում հետաքրքիր ու գեղեցիկ նկատառումներ կան, անսպասելի, փոքրիկ գյուտերի նման, ինչպես օրինակ. «Մենք մեր մայրերից մեկական կոպեկ պոկած. գնում, շրջապատում էինք այդ այլակերպ մարդուն, ու նա մեր կոպեկները գրպանը դնելով, սկսում էր խոսեցնել թութակին. որ միայն մի բառ գիտեր «դուռակ» /ասել է՝ «հիմար», բայց ռուսական «դուռակը» մեր հայկական «հիմարի» հոմանիշը չէ երևի, «հիմարը» իր փափուկ «հ»-ով և նույնքան փափուկ «ր»-ով շատ մեղմ է հնչում: Ռուսական «դ»-ն և կոշտ «ռ»-ն կարծես հիմարի դեմքին իջնող ապտակներ են/»:

Պարզից էի պարզ է մի բան. տաղանդավոր մարդը ինչ էլ անի. միևնույն է լավ է ստացվում:

Գիրքը, բնականաբար, այսօր չի գրվել, իսկ մեծերի ստեղծագործություններին անդրադառնալիս սովորաբար ասում ենք զարմանալիորեն արդիական է, բայց չենք զարմանում, որովհետև այդտեղ է նրանց մեծությունը, նաև այդտեղ:

Եվ երիցս իրավացի է մեր սիրելի բանաստեղծը մեր այսօրվա մասին գրելով «Եվ այդքան կարճ ժամանակում այդ ի՞նչ ահռելի արշավանք սկսեց իրը, առարկան, և նրանց առաջ որքան արագ ու անզոր նահանջեցին կարոտը, սերը, առեղծվածը, անմատչելին, ոգին ու հոգին...»:

Այսքա՞ն էլ ճշմարիտ մերօրյա հոգս ...

Բայց միևնույն է, անգամ այս համատարած «նահանջի» պայմաններում կա մխիթարություն, այնուամենայնիվ կա այս գիրքը, որը մերն է: Եվ այս գիրքը ստեղծողը մեր ազգից է: